ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Ս/թ օգոստոսի 9-15-ին Ծաղկաձորում տեղի ունեցավ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի համագործակցությամբ կայացավ համահայկական հայագիտական 6-րդ օլիմպիադան, որին մասնակցեցին ընդհանուր առմամբ 150 աշակերտներ ՀՀ-ից, ԼՂՀ-ից եւ Սփյուռքի հայկական կրթօջախներից:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս տարի առաջին անգամ օլիմպիադայի շրջանակներում կազմակերպվեց նաեւ »Հայոց Եկեղեցու պատմություն« առարկայի մրցույթ, որին մասնակցեցին 54 աշակերտներ:

Առարկայական օլիմպիադաներին մասնակցելուն զուգահեռ օրակարգում նախատեսված էին ազգային պարի ուսուցում, դասախոսություններ պատմամշակութային թեմաներով, ինչպես նաեւ մասնակիցների ուխտագնացություններ, որ իրականացավ ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի աջակցությամբ:

Համահայկական հայագիտական 6-րդ օլիմպիադայի եւ »Հայոց Եկեղեցու պատմություն« առարկայի մրցույթի արդյունքներն ամփոփվեցին օգոստոսի 14-ին՝ մրցանակաբաշխության հանդիսավոր միջոցառման ընթացքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Վարչապետական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը: Ս. Պատարագի ընթացքում Սրբազան Հայրն անդրադարձավ տոնի խորհրդին եւ Մարիամ Աստվածածնի առաքինի կերպարին, որը սրբության ու մաքրության, խոնարհության ու հնազանդության լավագույն օրինակն է ընտանիքի, հայ կնոջ եւ առհասարակ հայ քրիստոնյայի համար:

Հավարտ Ս. Պատարագի՝ Մայր Տաճարից եկեղեցականաց թափորն ուղղվեց դեպի Ս. Տրդատի Բաց Խորան, ուր, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Խաղողօրհնեքի արարողություն: Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի աղոթքի ընթերցումից եւ հոգեզմայլ շարականների երգեցողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խաղողն ու տարվա ողջ բերքը:

Ողջունում է Գեղարքունիքի մարզպետարանի ղեկավարությունը Ս. Էջմիածնի ամենօրյա ուղևորությունից հետո

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունը բաշխեց ներկա ժողովրդին՝ մաղթելով, որ Աստված երկնային շնորհներ հեղի ամենքի կյանքից ներս եւ բերք ու բարիքի առատության մեջ երջանիկ, ապահով ու անվրդով կյանք պարգեւի:

Վերջում միաբան սարկավագներն օրհնված խաղողի ողկույզները բաժանեցին ժողովրդին:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 19-ին, մատուցվեց հոգեհանգստյան Ս. Պատարագ՝ ննջեցյալ հոգիների խաղաղության ու հանգստության համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՄՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին էին այցելել շուրջ 200 երիտասարդներ՝ շնորհավորելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծննդյան տարեդարձի առիթով եւ իրենց հավատարմությունն ու զորակցությունը հայտնելու Հայ Եկեղեցուն: Երիտասարդները ներկայացնում էին «Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորումը», «Մայր Աթոռի Քարոզչական կենտրոն» խումբը, «Եկեղեցասեր երիտասարդներ» կառույցը, բուհական երիտասարդական միությունները, Մայր Աթոռի «Մանանա» երիտասարդական-քրիստոնեական ծրագիրը, ինչպես նաեւ «Մփյուռքահայ ուսանողների խորհուրդը», «Ռուսաստանի հայերի միության» եւ «Համաշխարհային հայկական կոնգրեսի» երիտասարդաց կազմակերպությունը, «Սերունդ», «Երիտասարդություն», «Երիտասարդներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպությունները:

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով, ապա ՀԵԵՄ հոգեւոր պատասխանատու Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը եկեղեցասեր երիտասարդների անունից շնորհավորեց Հայոց Հայրապետին ծննդյան 62-րդ տարեդարձի առիթով: Երիտասարդական կառույցների ողջույններ եւ բարեմաղթանքներ Նորին Սրբությանը փոխանցեցին նաեւ տարբեր կազմակերպությունների պատասխանատուները: Այնուհետեւ հոգեւոր երգերի կատարումով հանդես եկավ նորաստեղծ «Հավատամք» երգչախումբը:

Վերջում երիտասարդներին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց երիտասարդներին՝ Հայ Եկեղեցու շուրջը համախմբվելու, Եկեղեցու հոգեւոր առաքելության իրականացմանն աջակից լինելու համար՝ արձանագրելով, որ ազգի շարժիչ ուժը՝ երիտասարդությունը, նախանձախնդիր է իր Եկեղեցու կյանքի նկատմամբ, հավատարիմ՝ հայրերի սուրբ հավատքին ու ժառանգությանը, նվիրական սրբություններին ու ավանդույթներին: Նշելով, որ Հայրենիքը զորանում եւ Եկեղեցին փառավորվում ու պայծառակերպվում է, երբ ապրվածահաճո կյանքով է ապրում ողջ ազգը, նրա բոլոր զավակները՝ Վեհափառ Հայրապետը հորդորեց երիտասարդներին միշտ Եկեղեցու օրհնության ներքո մնալ եւ մասնակից դառնալ Եկեղեցու առաքելությանը՝ ժողովրդին քրիստոնեական արժեքներով առաջնորդելու, նրա կյանքն այդ արժեքների վրա խարսխելու: Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց երիտասարդներին իրենց աղոթքով, հավատով եւ գործերով միշտ պայծառ ու շեն պահել մեր սուրբ Եկեղեցին:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց երիտասարդներին հուզող հարցերին, որոնք առնչվում էին Եկեղեցու առաքելության իրականացման ճանապարհին երիտասարդների հնարավոր աջակցությանը, Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին ու դրանց հաղթահարման գործում երիտասարդության ներգրավվածությանը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գեորգ եպիսկոպոս Սարոյանը, երիտասարդական խմբերի պատասխանատուներ Տ. Երեմիա աբեղա Աբգարյանը, Տ. Թովմա աբեղա Խաչատրյանը, Տ. Հակոբ քահանա Խաչատրյանը եւ Գեղամ սարկավագ Ավետիսյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՋԻԲՐԱԼԹԱՐԻ ԱՆԳԼԻԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Օգոստոսի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Անգլիկան Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Ջիբրալթարի անգլիկան եպիսկոպոս Ջեոֆրի Ռոուելի եւ ուղեկցությամբ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը պատվիրակությանը ծանոթացրեց Մայր Աթոռի ներկայիս գործունեությանը, ինչպես նաեւ ընդգծեց Հայ Առաքելական Եկեղեցու կարեւոր դերակատարությունը հայ ժողովրդի ազգային-հոգեւոր կյանքում: Այնուհետեւ անդրադարձ կատարվեց Հայ Առաքելական եւ Անգլիկան եկեղեցիների հարաբերություններին, կարեւորվեց էկումենիկ երկխոսությունների զորացումը, ինչպես նաեւ համապեղ ջանքերի գործադրումը հանուն արդարության հաստատման եւ մարդկության խաղաղ ու բարօր կյանքի կերտման:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Քենթրբերիի արքեպիսկոպոս Ջաստին Ուելբիին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ԿԵՆԳՈՒՐՈՒ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Օգոստոսի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթում Հայաստանի հաղթողներին եւ ՀՀ մարզերում ու Արցախում լավագույն արդյունքները արձանագրած դպրոցականներին:

Մրցույթի կազմակերպիչ «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Մեսրոպ քահանա Արամյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց 2013 թ. «Կենգուրու» մրցույթի գրանցված գոհացուցիչ արդյունքները, ապա մրցույթի մասնակիցների եւ կազմակերպիչների անունից երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ամեն տարի ավանդաբար երիտասարդներին ընդունելու եւ իր հայրական պատգամը փոխանցելու համար: Այնուհետեւ աշակերտներին շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր օրհնությունը բերելով նրանց կարեւոր ձեռքբերումների առիթով: Նորին Սրբությունը մրցույթի հաղթողներին հորդորեց առավել նախանձախնդրությամբ ու ջանասիրությամբ շարունակելու գիտելիքներ ամբարելը՝ հայրենիքին ամուր հենարան լինելու համար: Ապա, անդրադառնալով ուսման կարեւորությանն ու անհրաժեշտությանը, Վեհափառ Հայրապետը դպրոցականներին պատգամեց պահպանել հայրերի կերտած դարավոր արժեքներն ու սրբությունները եւ որպես հայոց մշակույթի կրողներ՝ հարստացնել այն սեփական մտքի գեղեցիկ արգասիքներով:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց ծնողներին, մանկավարժներին եւ մրցույթի կազմակերպիչներին՝ գործադրած ջանքերի համար: Վերջում Վե-

հափառ Հայրապետը պատասխանեց պատանիների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու պատմության եւ Մայր Աթոռի ներկայիս գործունեության:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵՋ

Օգոստոսի 28-29-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի կողմից նշանակված Հայ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական հանձնախումբի ժողովը:

Ժողովին մասնակցեցին նախապատրաստական հանձնախմբի անդամներ՝ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Գերաշնորհ Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը, Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, Գերաշնորհ Տ. Նարեկ արքեպիսկոպոս Ալեմեզյանը եւ սրբադասման ու ծիսական բարեկարգության հանձնախմբերի անդամներ՝ Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Գերաշնորհ Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Սարգիսյանը, Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը եւ Գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Չարյանը:

Օգոստոսի 28-ին՝ չորեքշաբթի, Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետն ընդունեց ժողովական հայրերին եւ նրանց փոխանցեց Եպիսկոպոսաց ժողովի գումարման մասին իր պատկերացումներն ու արդյունալից աշխատանքի օրհնությունները:

Երկու օրերի ընթացքում ժողովական Սրբազան Հայրերը քննարկեցին Հայ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի գումարման թվականի, օրակարգի եւ ժամանակացույցի հետ կապված հարցեր:

Հայ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը տեղի կունենա 2013-ի սեպտեմբեր 24-27-ը Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ եւ ներկայությամբ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Մայր Աթոռի միջոցառումները նախապատրաստող հանձնախմբի ժողովը՝ նախագահությամբ հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի: Ժողովի ընթացքում քննարկվեցին եւ հստակեցվեցին Մայր Աթոռի կողմից ծրագրված միջոցառումները եւ դրանց կազմակերպման ժամանակացույցը, ինչպես նաեւ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի հետ համատեղ իրականացվելիք աշխատանքները:

Ժողովին մասնակցում էր նաեւ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար Հայկ Դեմոյանը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԺՈՂՈՎ

Օգոստոսի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հայ Եկեղեցու Երիտասարդաց միավորման (ՀԵԵՄ) ընդհանուր հոգեւոր պատասխանատու Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի նախագահությամբ տեղի ունեցավ ժողով, որին մասնակցում էին ՀԵԵՄ կենտրոնական գրասենյակի աշխատակազմը՝ հոգեւոր տեսուչ Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանի եւ գրասենյակի տնօրեն Գեւորգ Մկրտչյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ երիտասարդական խորհրդի անդամները:

Ժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերում էին ՀԵԵՄ կանոնադրության մշակման գործընթացին, միության 3-րդ պատգամավորական ժողովի նախապատրաստական աշխատանքներին, ինչպես նաեւ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ ՀԵԵՄ կենտրոնական գրասենյակի կազմակերպելիք միջոցառումներին:

Վերոհիշյալ հարցերի քննության համար որոշվեց նաեւ ժողով հրավիրել սեպտեմբերի 20-ին՝ հայաստանյան թեմերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կանոնադրության առնչությամբ որոշվեց լրամշակված նախագիծն ուղարկել թեմական առաջնորդներին ի քննություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 31-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց կրթության մշակների օրհնության մասնավոր կարգ: Գիտելիքի եւ դպրության օրվա առիթով Մայր Աթոռում արդեն ավանդաբար կազմակերպվող այս արարողությանը ներկա էին ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԿԳՆ աշխատակիցներ, ՀՀ մարզպետարանների կրթության վարչության պետեր, ՀՀ պետական բուհերի ռեկտորներ, ՀՀ քոլեջների եւ ուսումնարանների տնօրեններ, ՀՀ մարզերի եւ Երեւանի դպրոցների տնօրեններ, ինչպես նաեւ Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների պատասխանատուներ:

Մայր Աթոռի միաբան Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի նախագահությամբ կատարված արարողության սկզբում ներկաներին ողջունեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան վարդապետ Նավասարդյանը: Բարի գալուստ մաղթելով կրթության մշակներին համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Հայր սուրբն անդրադարձավ ուսուցչի վեհ կոչմանն ու առաքելությանը: «Ազգվածային խորհրդի անդատանում հայի արյան եւ քրտինքի ամեն մի կաթիլ նվիրյալ մանկավարժների ու կրթության գործի ազնիվ կազմակերպիչների միջոցով սիրո ուժով ծաղկել եւ պտղաբերել է: Եւ այսօր Տերը մեզ վրա առավել պատասխանատվություն է դրել մեր երեխաների, պատանիների եւ երիտասարդների կյանքում՝ գիտելիքին զուգահեռ զարգացնելու հոգեւոր-բարոյական, ազգային-քրիստոնեական մեր այն արժեքները, որոնք մարդուն դարձնում են առավել ազնիվ եւ պատասխանատու իր նախնիների բարի վաստակի առջեւ: Այս վեհ ու նվիրական գործի առաջիկա տարեշրջանի սկզբին Տիրոջ Իջման Սուրբ Սեղանի առջեւ եկեք աղոթենք եւ ուխտենք՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունից մինչեւ կրթության եւ գիտության ամենաբարձր ատիճանը՝ անսպառ եռանդով, աննահանջ սիրով

եւ անմնացորդ նվիրումով սնուցանելու մեր զավակներին, որպեսզի ամուր վեմի վրա հաստատված մնա հայ քրիստոնյայի տեսակն իր ինքնության բոլոր արտահայտություններով՝ ամուր փարված մնալով Առաքելական մեր Մայր Եկեղեցուն եւ ազգային մեր պատկանելությանը»:

Օրհնության կարգն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Պահպանիչ» աղոթքով եւ օրհնության խոսքով: Նորին Սրբությունը, շնորհավորելով ամենքին նոր ուսումնական տարվա առիթով, վստահություն հայտնեց, որ այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին կրթության եւ գիտության գործիչներին առավել կիսանդավառի ու կզորացնի ազգանվեր ծառայության մեջ: «Ձեր առաքելությունը արարչագործության պսակը հանդիսացող մարդու կրթությունն ու դաստիարակությունն է: Եւ մենք մեծապես կարեւորում ենք կրթության մշակների օրհնության այս արարողությունը, որպեսզի գաք Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Իջման Ս. Սեղանի առջեւ ձեր աղոթքը կատարեք, ձեր ուխտը վերանորոգեք՝ անդրադարձումով, որ պիտի կրթեք, դաստիարակեք մեր զավակներին Քրիստոսի Ավետարանի լույս պատվիրաններով ու պատգամներով, մեր հայրերի կերտած սրբազան ժառանգությամբ եւ ավանդով, որպեսզի մեր զավակները ձեր ձեռքերի մեջ հասունանան, նկարագիր ձեռք բերեն՝ լինելու արժանավոր զավակը մեր Հայրենիքի եւ մեր ժողովրդի», - նշեց Նորին Սրբությունը: Վեհափառն ընդգծեց, որ Հայրենիքի բարօր կյանքի երաշխիքը լուսավորված, կրթված, Քրիստոսի սիրով, Ավետարանի նվիրական պատվիրաններով հասակ առած եւ հոգի ու գիտակցություն կերտած զավակներն են: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ հայոց կյանքն անշեղորեն առաջնորդվի այն ճանապարհով, որով դարեր շարունակ քաջ ու խիզախ անցել են մեր հայրերը՝ հաղթահարելով ամեն փորձություն ու կյանքի դառնություն, եւ կերտել լուսավոր օրը մեր ժողովրդի:

Այնուհետեւ Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Նորին Սրբությունը վերստին իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք Հայրապետական Մեր օրհնությունը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով եւ շնորհավորում կրթական հաստատությունների բոլոր մանկավարժներին, ուսանողներին եւ աշակերտներին:

Սիրելիներ, տոնական այս օրը դիմավորում ենք ուրախ սրտով ու բարի ցանկություններով: Վստահ ենք, որ մեր նվիրյալ ուսուցիչների եւ կրթության բարի մշակների ջանքերով մեր զավակների համար, ուսումը, գիրքն ու ընթերցումը դառնում են կյանքի լուսատու կանթեղները: Ուսանեք սիրով, քանի որ սուրբգրային խոսքով՝ խելացի սիրտը ձեռք է բերում իմացություն, եւ իմաստունների ականջները փնտրում են ուսանելի խորհուրդներ (Առակ. ԺԸ. 15):

Մեր հայցն ու աղոթքն է առ Բարձրյալ Տերը, որ ասպվածային երկնառաք Իր օրհնությամբ արգասավորվի նոր ուսումնական տարին, եւ մեր զավակները ջանադրությամբ ամեն ժամ բազմապատկեն իրենց գիտելիքները, որպեսզի իմացությամբ զորացած կարողանան լավագույնս ծառայել մեր Հայրենիքին եւ Սուրբ Եկեղեցուն:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ